

Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ը Կը Կատարէ Բացումը Վերանորոգ Ակումբի

30 Սեպտեմբեր 2005
Հայֆա

Վերջապէս, Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբն, որն մինչեւ վերջերս Անգլեական բանակի 2րդ Համաշխարհային պատերազմէն լքեալ զօրանոցները կը

յիշեցներ, այսօր գտանք բոլորովին կերպարանափոխուած, շնորհիւ նախկին Հայֆահայ այժմ Գանատահայ բարերար եղբ. Միհրան Պարոնեանի իշխանական ներատուութեան (80000 Ամ. Տոլար):



Ներքինով թէ արտաքինով հիմնովին նորոգուած սրահի բացումը կատարուեցաւ ներկայութեամբ նոյնիքն բարերարի առաւել շրջանի մասնաճիւղի հիմնադիր անդամ (այժմ Հայրենադարձ) 90ամեայ

եղբ. Հայկ Ասլանեանի, որը յատկապէս այս օրուան առթիւ ժամանած էր Հայֆա:

Աւելի քան 200 հանդիսականներու առաջ ժապաւէնը կտրեցին եղբ. Միհրան Պարոնեան թէ Հայկ Ասլանեան միասին: Քիչ ետք սրահ ժամանեց Հայֆայի սիրուած քաղաքապետ Եօնա Եահալ, որը իր խօսքի մէջ Հայ գաղութի հետ համագործակցութեան մեծ տրամադրութիւն արտայայտեց:



Ժապաւէնը կտրած պահուն՝ ձախէն աջ՝ Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի ատենապետ եղբ. Շոնի Մուրաճալեան, եղբ. Հայկ Ասլանեան եւ բարերար եղբ. Միհրան Պարոնեան:

Պրն. քաղաքապետը չ'մոռցաւ նաեւ յիշելու զոյգ ժողովուրդներու, Հայոց թէ Հրէից, ճակատագրի հասարակայ գծերը (Ցեղասպանութիւն - Սփիւռք եւն.):

Տեղույն Հովի Հայր Աւետիս Էփրանեանի աղօթքէ ու օրհնութենէ ետք, խօսք առին նաեւ մասնաճիւղի ներկայի ատենապետ եղբ. Շօնի Մուրաճալեանը, վերոյիշեալ ծերունի եղբ. Հայկ Ասլանեանը թէ ինքն բարերար եղբ. Միհրան Պարոնեանը:

Եղբ. Պարոնեանը նշեց կարեւորութիւնը դպրոցի եկեղեցույ թէ ակումբի որպէս ամէն Հայ գաղութի ազգապահպանման ամրոցներ: Եղբ.



Հայֆայի քաղաքապետ Եօնա Եահալ խօսքի պահուն:

Պարոնեանը նաեւ պատրաստակամութիւն յայտնեց Հայֆայի Հայոց մինչեւ ցարդ աւերակ եկեղեցւոյ նորոգման աշխատանքներու մասնակցելու այսուհանդերց խնդրեց՝ աւելին պահանջեց որ եկեղեցւոյ պատասխանատուները անցնին աւելորդ քաշքշուկներէ գործի, հաւանաբար ակնարկութիւնը ուղղելով նաեւ գաղութին ու վերջապէս Ս. Աթոռին, որը այսօր զբաղած է Եաֆայի Հայոց Եկեղեցիի նորոգութեամբ: